Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ՊԵՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 125-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Ազգային ժողովի աշխատակարգի 87-րդ կետով, հանձնաժողովը որոշում է.

1. 2024 թվականի նոյեմբերի 8-ին՝ ժամը 11:00-ին Ազգային ժողովի նիստերի դահլիճում հրավիրել խորհրդարանական լսումներ, որի թեման է. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (*Կ-927-26.09.2024-ՊԻ-011/1*) և հարակից օրենքների նախագծերի փաթեթի քննարկում»:

2. Հաստատել խորհրդարանական լսումների ընթացակարգը՝ համաձայն հավելված 1-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հավելված 1

«Խորհրդարանական լսումներ հրավիրելու մասին» Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի որոշման

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԹԵՄԱՆ	««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (Կ-927-26.09.2024-ՊԻ-011/1) և հարակից օրենքների նախագծերի փաթեթի քննարկում»
ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ	ք. Երևան, Բաղրամյան 19, Նիստերի դահլիճ
ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ	2024 թ. նոյեմբերի 8 ժամը 11:00
10:30-11:00	Մասնակիցների գրանցում
11:00 – 11:05	Բացման խոսք՝ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ **Վլադիմիր Վարդանյան**
11:05 – 11:20	Օրենքի նախագծերի փաթեթի հիմնական դրույթների ներկայացում Զեկուցող՝ Կառավարության ներկայացուցիչ
11:20 - 12:00	Հարցեր զեկուցողին (մինչև 3-ական րոպե)
12:00 – 12:30	Ընդմիջում
12:30 - 14:30	Մտքերի փոխանակություն (ելույթներ մինչև 5-ական րոպե)
14:30 – 14:45	Եզրափակիչ ելույթ՝ Կառավարության ներկայացուցիչ
14:45 - 15:00	Ամփոփում՝ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ **Վլադիմիր Վարդանյան**

Լսումները նախագահում է պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը:

Հարցերի և ելույթների համար հերթագրումն իրականացվում է հարց տվողի կամ ելույթ ունեցողի անունը, ազգանունը և կազմակերպության անվանումը հանձնաժողովի փորձագետներին տեղեկացնելով (հերթագրվելով): Հարցերին կարող են պատասխանել նաև հիմնական զեկուցողի հրավիրած անձինք: Սույն ընթացակարգով նախատեսված ժամկետները կարող են փոփոխվել լսումները նախագահողի կողմից: